ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃԸՆ,ՏՈՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 նոյեմբերի 2025 թվականի N 1707

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՆՈՒՆԵ ՄՈՒՍՈՅԱՆԻՆ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 962-Ն որոշման 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության 2002 թվականի սեպտեմբերի 24-ի՝ <<Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին>> օրենքի 2-րդ հոդվածի, Քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 37-րդ հոդվածների, Ընտանեկան օրենսգրքի 109-րդ, 134-րդ, 135-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Նոր Հաճըն համայնքի Նոր Հաճըն քաղաքի Թումանյան փողոցի 3-րդ շենքի 85 բնակարանի բնակչուհի՝ Նունե Սարգսյանի դիմումը և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 12 նիստի արձանագրությունը, հաշվի առնելով անչափահաս Նունե Մուսոյանի՝ առանց ծնողական խնամքի մնացած լինելու հանգամանքը և երեխայի լավագույն շահը ***որոշում եմ.***

1. Անչափահաս Նունե Մուսոյանին /ծնված՝ 18.04.2023թ/ հաշվառել որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա:

2. Առանց ծնողական խնամքի մնացած երեխա Նունե Մուսոյանի նկատմամբ սահմանել խնամակալություն և խնամակալ նշանակել տատիկին՝ Նունե Սարգսյանին /ծնված 28.03.1973 թ./:

3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխա Նունե Մուսոյանի բնակությունը և խնամքը իրականացնել Նոր Հաճըն քաղաքի Թումանյան փողոցի 3-րդ շենքի բնակարան N5 հասցեում:

4.Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին՝ իրականացնել վերահսկողություն Նունե Սարգսյանի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նունե Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Ք.Նոր Հաճըն
05.11.2025թ.